



ԱՂԱՎՆԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՆՐ



ունիսի 7-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի պատմական տոնի օրն էր։ Վաղ առավոտյան ուրախ տրամադրության մեջ եմ. այդ օր որոշեր ենք խոսք մը ընկերներով ուխտի կրթալ Ս. Էջմիածին։ Առավոտյան ժամը 9-ին, երգչախումբին արամադրված ավտոբուսը արդեն մեր տան առջև կանգնած մեզ կսպասե։ Անմիջապես ճամբար կեղծեք երգչախումբի երկսեռ կազմի հետ։ Բարձր է քողարկի տոնական տրամադրությունը։ Ամառնային հրաշալի առավոտներն մեկն է։ Ակառիաներու, թմբիներու և փշտիկներու թարմ բուրմունքը լեցուցեր է օդը։ Շահումյան հրապարակին վրա, Հայաստանի միջքաղաքային ավտոբուսների կայանի զարաժեն տանյալ ավտոբուսներ և տակսիներ ուղևորվող բազմություններու խումբերը կփոխադրեն դեպի Էջմիածին՝ տոնակատարության մասնակցելու համար։

Երթևեկության եռուղեք մեծ է։ Մեր ավտոբուսը թռչունի արագությամբ կսահի Հաղթանակի հոյակերտ կամուրջին և շարունակվող ասֆալտապատ ծառուղիներուն մեջեն, որոնց աջին ու ձախին կղզյան կարկաշատ առուներ, եզերված սլացիկ բարդիներով և խիտ ուռենիներով։ Նոր-Կիրիկիայեն մինչև Էջմիածին երկարող խճուղիին վրա շարանշարան փուլեր են հայրենադարձներու միահարկ և երկհարկանի գեղեցիկ տունները իրենց կարմրորակ տանիքներով և տնամերձ այգիներով։ Իսկ համայնական կանաչագեղ դաշտերու անհունություններուն ետև հայոց պատմական Մասիսն է, որ հավերժական ձյունը գազաթին, կարծես մեզ կառաջնորդե դեպի Ս. Էջմիածին։ Մեր ավտոմեքենան

կսուրա ճամբուն վրա դանդաղ նոր-Կիրիկիա արվարձանեն, ապա կանցնի Նարադուղ, Փարաքար ու Զվարթնոց գյուղերուն ընդմեջեն, որոնց հավատացյալ ժողովուրդը նույնպես խոսք-խոսք կաճապարե դեպի վանք։

Ժամը 9.30-ին կհասնինք Էջմիածին։ Ամեն ինչ տոնական ցնծության մեջ է։ Ամեն կողմ դալար ու կանաչ, ծառ ու ծաղիկ։ Օդը հազեցած է ամառնային քաղցր բուրմունքով։ Հյուրասեր Էջմիածնեցին, ալեգարդ ծերունիներ մինչև մանուկը, մաքուր և կոկիկ հագած, կղիմավորե իր հյուրերը։ Ս. Էջմիածնի վանքին մոտակա հրապարակը իրարու ետև կհասնին տասնյակ ավտոբուսներ և տակսիներ, բերելով մայրաքաղաք Երևանեն և շրջաններեն ուղևորներու նորանոր բազմություններ։ Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիի կեդրոն Ս. Էջմիածնի հաստատման ազգային-եկեղեցական տոնն է։ Դեպի Ս. Էջմիածնի Տաճարը տանող ծառուղիեն արդեն կլսենք եկեղեցիին զանգակները։ Ինչպիսի՞ անանուն ու քաղցր խոսքեր կարթնցեն այդ զանգերը չուրաքանչուր հավատացյալ հայու սրտին մեջ։ Հնադարյան Տաճարը իր շրջափակով հանդիսավոր օրվան մը տոլովորությունը կուտա։ Ուխտի օր է, հայ ժողովուրդի ազգային-եկեղեցական միասնության սուրբ օրը։ Եկեղեցիի նկարչազեղ մուտքը, զարդաքանդակ մայր զմբեթով և զեղաքանդակ զանգակատունով, մեզ կպատմե հայ ժողովուրդի ճարտարապետական անցյալ արվեստի մասին, որուն հոյակապ նվաճումներն մեկն է Կաթողիկե Մայր Եկեղեցին։

Ուխտավորներու բազմությունը արդեն լեցուցած է Մայր Տաճարը, գավիթը, բակը, շրջակայքը: Երգչախումբը հազիվ կկարողանա ժողովուրդի հոսանքները ձեղբելով հասնիլ մինչև աջակողմյան դասը, երգհոնին քով, իր մնացուն տեղը: Ս. Էջմիածնի դարավոր Տաճարը կշողշողա էլեկտրական ջահերու և պայծառ, ոսկեզօծ կանթեղներու լուսին մեջ:

Կակաի օրվան հանդիսավոր սուրբ պատարագը: Երգչախումբը հիանալի փերպով փերդե ձեռնհարդ խորինքը: Ներդաշնակ մեղեդիին և եկեղեցիի զանգակներու դողանքին տակ գավիթեն համարաբայլ կհառաջանա պատարագիչ դերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, Ռուսմանհայթ թեմի առաջնորդը, որ ժամանակավոր կերպով հյուր է եկած մեզ մոտ: Սրբազանը լրիվ զգեստավորված է, եպիսկոպոսական խուլբը դլխին ու խաչը ձեռքին, շրջապատված դպիրների և սարկավագների: Բուպեններ կսահին աննկատ, մինչ դեպի Տաճար կհոսի ժողովուրդի հոսանքը: Սուրբ պատարագը կշարունակվի սրբազան վեհօրվայմբ և տպավորիչ հանդիսավորությամբ: Հավատացյալ հայ ուխտավոր ժողովուրդը սրտեռանդն ու խորունկ հավատքով կաղթեն իր պապերու լուսեղեն խորաններուն առջև, ամուսնի մը և հաղորդվելով ամոնեց ողիտվ և հավատքով, անշեջ պահելու համար սրբազան հուրը հայրենասիրության, ժողովուրդասիրության, իր հոգիի խորանին և պատարագի սեղանին առջև: Իջման սեղանին առջևն են, հայ քրիստոնյա ժողովուրդին առաջին պատարագի սեղանին առջև: Այստեղ է, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ իր տեսիլքին համաձայն բարձրացուց առաջին Ս. Սեղանը և ամուսնի վրա մատուց իր առաջին պատարագը: 1600 տարիին ի վեր կանդուն է մնացած Իջման սեղանը, որ հայ ժողովուրդին սրբություն սրբոցն է և այսօր ալ նույն հիշատակի սուրբ արարողության մեջն է: Մեր պապերը, երջանիկ օր մը, իրենց հավատքի և հայրենասիրության կրակով, անզամ մըն ալ կրկինքեն Աստվածորդին փեցուցին հայ ժողովուրդի համար, որպեսզի ինքը՝ Միածինը ամրապնդեր իր աստվածային ձեռքով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիի հիմքը, և որպեսզի «Իրունք դժխոց զնա մի լաղթահարեցեն»: Այսօր ահա տարեդարձն է այդ երջանիկ օրվան:

Անուշաբուր խոնկի հոտը տարածվեր է ամեն կողմ: Երգհոնի ընկերակցությամբ կշարունակվի սուրբ պատարագը, մինչ եկեղեցիի զանգակները կալեստեն օրվան հանդիսության պատմական նշանակությունը և Իջման սեղանի առջև դերաշնորհ պատարա-

գիչ սրբազանը, ընդկատարած, կաղթեն, այնպես, ինչպես յաղթիք են մեր նախկին վարդապետները: Պահ մը զանգակներու ալիքի եռանդուն կակսին հնչել: Հայոց Վեհափառ Հայրապետը թափորով Տաճար կիջնե: Խոնամերում հավատացյալ ժողովուրդը ծովի ալիքներու նման կալեկծվի: Մինչդեռ թափորը կհառաջանա դեպի Իջման սեղանը, Վեհափառը՝ խաչն ու կաթողիկոսական ասան ձեռքին, սպիտակ, ոսկեհյուս ծաղկյա թանկարժեք շուրջառն հագին, աջին և ձախին խաչակնքելով ու օրհնելով, խոնամերամ ժողովուրդին մեջեն կհասնի Իջման սեղանին առջև իրեն համար հատկացված ոսկեզօծ բազկաթոռին քով, որոն տոբերուն տակ փռված է արծվեղորդը: Հոյատեսիլ է Վեհափառի մուտքը Մայր Տաճար, շրջապատված միաբաններով, սարկավագներով, բոլորն ալ հագած ամենաթանկագին զգեստներ, ձեռքերին բռնած խաչեր, բուրվառներ, ավետարաններ, սպասներ: Մերուսագարդ Հայրապետը ոտքի կանգնած, երկյուղածությամբ կհետևի սուրբ պատարագին, ամուսնի շրթները ամուսնաբար աղոթքի մրմունջներ կարձակեն: Հանդիսավոր պատարագը իր հոգեզմայլ երգեցողություններով կթափանցի հավատացյալ ժողովուրդի հոգիներն ներս: Բուրվառներեն կբարձրանան խոնկի կապույտեղ ծվեններ, Տաճարին մեջ ստեղծելով կրոնաբուրյ մթնոլորտ մը: Կնայիմ Վեհափառին: Որքան տպավորիչ է արեղարդ Հայրապետի հափշտակված աղոթասացությունը: Ան վեհաբար կաղթեն, ես հավատացած եմ՝ իր Հայրենիքին համար, իր հավատացյալ ժողովուրդին համար, Հին Կտակարանի մեծ և արդար նահապետներու հափշտակությամբ: Անոր պատկանելի հասակին մեջ ես մարմնացած կտեսնեմ այդ պահուն Լուսավորիչը, Սահակ-Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը, Նարեկացին, Շնորհալին...: Որքան հոգեզմայլ են ամուսն աչքերը և ուրախ՝ ի տես իր ժողովուրդի լույս հավատքին, իր Աթոռի զարթոնքին: Ես ալ վերացած եմ իմ հոգիով դեպի անցյալն ու ապագան...: Շնորհաբար դարձողիչ Վազգեն սրբազանի ձայնը ինձ ետ կբերե երազներու աշխարհեն: Պատարագիչ սրբազանը կբարոզե օրվան նշանակալից մեծ տոնին մասին: Դարավոր Իջման սեղանին հնչած իր հմտալից և կուռ խոսքերը հայ հավատացյալ ժողովուրդի հոգիին կրոնական և հայրենասիրական հուզումներու պերճարտահայտություններն են: Սրբազանը կխոսի ամեն հայու սիրտեն, հավատքեն, հայրենասիրությունեն: Անոր մեջ հայ ժողովուրդն է, որ կխոսի և կարտահայտե իր

անսահման սերն ու նվիրվածությունը Ս. Էջմիածնին, անոր ալեգարդ ու հայրենասեր Հայրապետին: Այո՛, կմտածեմ ես, Էջմիածինը հանդիսացած է հայ ժողովուրդի պարծանքը, անոր ազգային-եկեղեցական միասնությունը խորհրդանշելը, երեկ և այսօր, ինչպես և վաղը, հավիտյան:

Սուրբ պատարագը լրանալի վերջ, Էջման սեղանին առջև հանդիսավոր Հայրապետական մաղթանք կկատարվի: Վեհափառ Հայրապետի շուրջն են գերաշնորհ Վահան և Վազգեն սրբազանները, երիտասարդ վարդապետները, քահանաները, սարկավազները: Ամբողջ Տաճարին մեջ կթնդա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիի օրհներգը՝ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը: Սրբազան, սարսուռ մը կանցնի բոլոր հավատացյալներու հոգիին մեջեն: Ոչ մեկ ժամանակ այդ սքանչելի շարականը զիս այնքան չէ հուզեր, որքան այդ պահուն: Հուզումեա ես կուլամ երեխայի մը նման...: Կերպի և Հայրապետը, կերպի ամբողջ եկեղեցին իբր մեկ սիրտ, մեկ հոգի, մեկ մարմին...

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց
ընդ նմա,
Զայնը հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաստացեալ
արքային:»

Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի
Հայաստան աշխարհի»:

Եկեղեցին լրանալի վերջ երկար ժամանակ ևս այդ օրվան հանդիսության տպավորության տակ կմնամ, մինչ ժողովուրդը անընդհատ հոսանքով կմտենա Վեհափառին՝ համբուրելու համար անոր սուրբ խաչն ու Աջը: Հետո Վեհափառը թափորով կառաջնորդվի Վեհարան, շրջապատված հավատացյալ ժողովուրդի հոծ բազմութեամբ, որուն հայրենասեր ու հավատացյալ Հայրապետը կուտա իր հայրական օրհնությունները:

Այդ օրը իմ կյանքի ամենահերջանիկ ու հավետ ամոթանալի օրերն են կը կմնա իմ հիշողության մեջ:

